

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի <<է>> կետից հետո առաջին պարբերությունում <<գրավոր հայտարարություն>> բառերը փոխարինել <<վերադաս հարկային մարմնի հաստատած ձևով գրավոր հայտարարություն>> բառերով:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) առաջին մասից հանել <<՝ մինչև այդ գործարքի մասով ԱԱՀ-ի պարտավորության ծագման պահը>> բառերը.

2) երկրորդ մասը <<հաշվարկային>> բառից հետո լրացնել <<թղթային կամ էլեկտրոնային>> բառերը և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

<Էլեկտրոնային հարկային հաշիվը պետք է հանդիսանա էլեկտրոնային փաստաթուղթ և պաշտպանված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հարկային հաշիվ չեն համարվում օրենսդրությամբ կրճատ հաշիվ համարվող հաշվարկային փաստաթղթերը:>>:

Հոդված 3. Ուժը կորցրած համարել Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետը:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Հոդված 20. Թղթային կամ էլեկտրոնային հարկային հաշվում պարտադիր նշվում են.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներով նախատեսված տվյալները,

2) ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը՝ առանձին տողով,

3) հարկային հաշվի սերիան ու համարը,

4) ԱԱՀ վճարողի հաշվառման համարը:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների օտարման դեպքերում հարկային հաշվում առանձնացվում է նաև ակցիզային հարկի գումարը:

Հարկային հաշվում առանձին տվյալների բացակայության (բացառությամբ՝ ԱԱՀ-ի գումարի) կամ սխալ լրացման դեպքում հարկային հաշիվը համարվում է սահմանված կարգի խախտումով լրացված հարկային հաշիվ:

Հարկային հաշիվները դուրս են գրվում՝

1) էլեկտրոնային եղանակով կամ՝

2) հարկային մարմնից ձեռք բերված հարկային հաշիվների թղթային ձևերի լրացմամբ:

Հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերը ենթակա չեն այլ անձանց օտարման կամ պատճենահանման: Հարկային հաշիվների թղթային ձևերի տրամադրման, դուրսգրման, պահպանման, ստացված հարկային հաշիվների ձևերի օգտագործման վերաբերյալ հաշվետվության ներկայացման, խոտանված, անվավեր ճանաչված և չօգտագործված հարկային հաշիվների ձևերի վերադարձման կարգերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվների և իրենց կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: Տեղեկանքում ԱԱՀ վճարող անձը ներառում է տեղեկություններ միայն այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում տվյալ անձին հարկային հաշիվ տրամադրած կամ նրանից հարկային հաշիվ ստացած անձի համար տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ տրամադրված հաշիվներում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափը: Սույն մասում նշված տեղեկանքը կարող է ներկայացվել էլեկտրոնային եղանակով:

Սույն օրենքի 8 հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում հարկային պարտավորություն կրելիս ավելացված արժեքի հարկ վճարող անձինք Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձի անունից կարող են օրենքով

սահմանված կարգով դուրս գրել հարկային հաշիվներ, որոնցում, որպես ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար (Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդպիսի կարգ սահմանված լինելու դեպքում) և հարկ վճարողի հաշվառման համար նշում են իրենց համապատասխան հաշվառման համարները: Նշված կարգով դուրս գրված հարկային հաշիվները համարվում են մատակարարի կողմից դուրս գրված:

Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները այդ հաշիվները դուրս գրողի կողմից չեն ներառվում սույն հոդվածով սահմանված տեղեկանքում:

- 1) այն հաշիվների մասով, որոնք դուրս են գրվել ինտերնատային կապի միջոցով,
- 2) այն հաշիվների մասով, որոնք դուրս են գրվել առանց ինտերնատային կապի և որոնց վերաբերյալ տեղեկատվությունը, մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը, էլեկտրոնային եղանակով ներկայացվել է հարկային մարմին:

Էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները չեն ներառվում այդ հարկային հաշիվները ստացողի կողմից ներկայացման ենթակա՝ սույն հոդվածով սահմանված տեղեկանքում, եթե այդ հաշիվների ստացումը էլեկտրոնային կարգով, մինչև տեղեկանքի ներկայացման ժամկետի ավարտը, հավաստվել է ստացողի կողմից:

Սույն հոդվածով սահմանված տեղեկանքը հարկային մարմին չի ներկայացվում, եթե այլ պայմաններում դրանում ներառվելիք՝ բոլոր հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները սույն հոդվածի համաձայն ենթակա չեն ներառման հարկային մարմին ներկայացվող տեղեկանքում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է ԱԱՀ վճարողների հաշվառման կարգը, հարկային հաշիվների դուրս գրման կարգը, հարկային մարմնից հարկային հաշիվների թղթային ձևերի ձեռքբերման գինն ու կարգը, հարկային մարմնի կողմից տրամադրվող հարկային հաշիվների ձևերի տպագրության, հարկային հաշվի սերիայի և համարի գեներացման կարգը: >>:

Հոդված 5. Ուժը կորցրած համարել 23-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 1-ին հոդվածը կիրառվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո հաշվետու ժամանակաշրջանների համար:

Ամփոփաթեթ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ ԱԺ առաջին ընթերցման ժամանակ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Մեկնաբանություն
«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.		
ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ նոր 16.1-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը հստակեցնել:	Ընդունվել է պարբերությունը վերախմբագրվել է և 3-րդ պարբերությունում չվերջնաժամկետով» բառից հետո լրացվել են Հ(այսինքն՝ տվյալ հարկային պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)» բառերը:
ՀՀ կառավարություն	2. Նախագծում սահմանել դրույթ, համաձայն որի 3 տարուց ավելի հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող ճշտված հաշվարկները չեն կարող ներկայացվել:	Ընդունվել է նախագծի 5-րդ և 6-րդ հոդվածները դարձել են համապատասխանաբար 6-րդ և 7-րդ հոդվածներ, իսկ 5-րդ հոդվածով օրենքի 30 ¹ -րդ հոդվածի վերջին նախադասությունում <<հարկային պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող>> բառերը փոխարինվել են <<հարկային պարտավորության գումարները կամ հաշվանցվող գումարներն փոփոխող>> բառերով:
«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.		
ՀՀ կառավարություն	1.Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ նոր 6.1-րդ հոդվածի 3-րդ մասը հստակեցնել:	Ընդունվել է մասը վերախմբագրվել է և 3-րդ մասում չվերջնաժամկետով

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Մեկնաբանություն
		բառից հետո լրացվել են Հ(այսինքն՝ տվյալ սոցիալական վճարի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)» բառերը:
ՀՀ կառավարություն	2. Նախագծում սահմանել դրույթ, համաձայն որի 3 տարուց ավելի հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող ճշտված հաշվարկները չեն կարող ներկայացվել:	Ընդունվել է նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածները դարձել են համապատասխանաբար 5-րդ և 6-րդ հոդվածներ, իսկ 4-րդ հոդվածով օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունում <<սոցիալական վճարների պարտավորության գումարները նվազեցնող կամ հաշվանցվող գումարներն ավելացնող>> բառերը փոխարինվել են <<սոցիալական վճարների պարտավորության գումարները կամ հաշվանցվող գումարներն փոփոխող>> բառերով:
«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ նոր 12.1-րդ հոդվածի՝ ա) 2-րդ մասում «Ապահովադրի» բառը փոխարինել «Վճարողի» բառով բ) 3-րդ մասը հստակեցնել	Ընդունվել է Ընդունվել է մասը վերախմբագրվել է և 3-րդ մասում «վերջնաժամկետով» բառից հետո լրացվել են Հ(այսինքն՝ տվյալ վճարի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)» բառերը:
ՀՀ կառավարություն	2. Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասում լրացվող նոր պարբերությունում «10-օրյա» բառը փոխարինել «15-օրյա» բառով:	Ընդունվել է
«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.		

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Մեկնաբանություն
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ նոր 11.1-րդ հոդվածի 3-րդ մասը հստակեցնել:	Ընդունվել է մասը վերախմբագրվել է և 3-րդ մասում «վերջնաժամկետով՝ Բառից հետո լրացվել են Հ(այսինքն՝ տվյալ վճարի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ Բառերը:
«Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ նոր 13.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը հստակեցնել:	Ընդունվել է մասը վերախմբագրվել է և 1-ին մասի 3-րդ պարբերությունում Հվերջնաժամկետով՝ Բառից հետո լրացվել են Հ(այսինքն՝ տվյալ վճարի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ Բառերը:
«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.		
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ նոր 36.1-րդ հոդվածի 3-րդ մասը հստակեցնել:	Ընդունվել է մասը վերախմբագրվել է և «վերջնաժամկետով՝ Բառից հետո լրացվել են Հ(այսինքն՝ տվյալ պետական տուրքի պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ Բառերը:
Օրենսդրական փաթեթի մյուս նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել		